ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017 թվականի թիվ 148-Լ որոշմամբ հաստատված «Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի» **(այսուհետ նաև՝ Ծրագիր)** 7-ից 11 կետերի պահանջներով,

Հիմք ընդունելով Փաստաբանների պալատում երիտասարդ փաստաբանների անվճար օգտագործմանը հատկացված աշխատասենյակից **(այսուհետ նաև՝ Աշխատասենյակ)** օգտվելու հայտերի ընդունման և քննարկման ժամանակահատվածը սահմանելու, ինչպես նաև հարակից հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությունը,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. 2026 թվականի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածում Աշխատասենյակից օգտվելու համար ընդունել հայտեր՝ 2026 թվականի հունիսի 29-ից մինչև 2026 թվականի հուլիսի 03-ը ներառյալ:
2. Սահմանել, որ՝

2.1) Աշխատասենյակից օգտվելու հայտերն ընդունվում են էլեկտրոնային փոստով (ստորագրված և սկանավորված տարբերակով) info@advocates.am կամ youthboard@advocates.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև առձեռն՝ ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում, հայտերի ընդունման ժամանակահատվածում ներառված յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ն:

29 հունիսի 2026թ.
թիվ 07-Լ
ք. Երևան

2.2) Հարցազրույցն անց է կացվելու ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում կամ առցանց՝ 2026 թվականի հուլիսի 06-ին, ժամը 12:00-ից սկսած՝ հավակնորդների հետ նախապես համաձայնեցված ժամին և եղանակով:

2.3) Փոստով ուղարկված հայտերն ընդունված չեն համարվի, եթե հասցեատերը փոստային առաքանին փաստացի ստանա 2026 թվականի հուլիսի 06-ից հետո:

3. Հաստատել Աշխատասենյակից օգտվելու համար հայտի ձևը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհրդի
նախագահ՝ Արև Հարությունյան